«ՍԵՎԱՆԻ Խ.ԱԲՈՎՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԱՎԱԳ ԴՊՐՈՑ»

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ 2022

ԱՎԱՐՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

ԹԵՄԱ - Հասարակագիտություն առարկայի դասավանդման ընթացքում անձի ներդաշնակ և բազմակողմանի զարգացման նպատակով բարոյական,իմացական և գեղագիտական արժեքների ձևավորումը

ԱՌԱՐԿԱ - Հասարակագիտություն

ՀԵՂԻՆԱԿ - Մարիամ Մարտիրոսյան

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆ - Ձիլի մ/դ

Բովանդակություն

1. Ներածություն……3
2. «Արժեքային համակարգ » հասկացությունը……5
3. Արժեքների տարբերակումը……6
4. Ուսուցման գործընթացում սովորողների արժեքային համակարգի ձևավորումը……11
5. Եզրակացություն……14
6. Օգտագործված գրականության ցանկ……15

Ներածություն

Հանրակրթական դպրոցում հասարակագիտության դասընթացի դասավանդումն ունի լայն հնարավորություններ: Այն բացառիկ կարևոր նշանակություն ունի ազգային անկախ պետականության ուղին բռնած Հայաստանի Հանրապետության համար, հայրենիքին նվիրված, բազմակողմանիորեն զարգացած, գրագետ, բարոյական բարձր նկարագիր ունեցող քաղաքացիներ կրթելու ու դաստիարակելու գործում: Անկախ նրա ապագա մասնագիտությունից ու գործունեության ոլորտից՝ նրա մոտ պետք է ձևավորվի հավասարակշռված, բարեկիրթ վարքագիծ, որը նրան հնարավորություն կտա ազգային հպարտությունը, ազգասիրությունը, ազգային մտածողությունը զուգակցել մարդասիրության, աշխատանքային պատասխանատվության, դժվարությունները հաղթահարելու որակների հետ:

Հասարակագիտություն առարկան նպաստում է աշակերտների բարոյական, իմացական և գեղագիտական արժեքների ձևավորմանը:

Թեմայի նպատակն է վեր հանել և վերլուծել այն խնդիրները, որոնք առաջանում են սովորողների մոտ առարկայի դասավանդման ժամանակ արժեհամակարգ ձևավորելու ընթացքում: Այս նպատակին հասնելու համար անհրաժեշտ է լուծել մի շարք խնդիրներ՝

- Զարգացնել սովորողների ճանաչողական, տրամաբանական, ստեղծագործական մտածողությունը, հաղորդակցական, համագործակցային և ինքնուրույն գործունեության կարողություններն ու հմտությունները:

- Խթանել սովորողների ճանաչողական ակտիվությունը, մտածողության ինքնուրույնությունը, սեփական գիտելիքներն ինքնուրույն լրացնելու և հարստացնելու կարողությունները:

- Ձևավորել սեփական գործունեությունը հանդուրժողականության և մարդու իրավունքների, ինչպես նաև համամարդկային բարոյական սկզբունքներին համապատասխան կառուցելու պահանջմունք և կարողություն:

- Ձևավորել գիտակից վերաբերմունք համամարդկային գլոբալ հիմնախնդիրների, բնական աղետների, մարդկության ճակատագրի և ապագայի նկատմամբ:

«Արժեքային համակարգ » հասկացությունը

«Արժեհամակարգ» հասկացությունը մանկավարժական գիտության մեջ ըմբռնվում է բավական լայն շառավղով: Առավել ընդունված է այն ընկալումը, որ արժեհամակարգը մարդու բարոյական, գեղագիտական, հոգևոր, իմացական, մշակութային և էթնիկական արժեքների համախումբն է , որն անհրաժեշտ է անձի ներդաշնակ,բազմակողմանի ձևավորման և զարգացման համար:Արժեհամակարգի ձևավորման և նրա հարաբերական կայունության ապահովման համար հանրակրթության բնագավառում կարևոր և անփոխարինելի նշանակություն ունեն բոլոր ուսումնական առարկաները, այդ թվում հասարակագիտությունը: Արժեհամակարգի մեջ կուտակված է անցյալի փորձը, որի յուրացումը աշակերտների մեջ ձևավորում է հայրենասիրություն, սեփական ժողովրդի պատմության , նրա ստեղծած մշակութային արժեքների , գիտական նվաճումների համար հպարտության զգացում: Իսկ ակտիվ ճանաչողական գործունեության պայմաններում ձևավորված գիտելիքները աշակերտների մոտ վերածվում են համոզմունքների և կարողությունների:

Այսօր աճող սերնդի դաստիարակության գործն ընթանում է տարբեր հանգամանքների ազդեցության ներքո՝ ժողովրդագրական,ազգային, մշակութային ընտանեկան, կրթական,հասարակական, սոցիալական և այլն: Հաշվի առնելով բազմաթիվ այս և այլ հանգամանքներ՝ ժամանակակից մանկավարժության համար խիստ խնդիր է դառնում սովորողների ազգային գիտակցության ձևավորումը սեփական ժողովրդի պատմության ու մշակույթի հենքի վրա՝ չանտեսելով համամարդկային արժեքները:

Աշակերտների արժեքների ձևավորման խնդիրները լուծվում են ոչ միայն ընտանիքում, այլ նաև ուսումնական հաստատություններում՝ ուսումնադաստիարակչական գործունեության ընթացքում: Ուսուցման դաստիարակչական ներգործությունը օբյեկտիվ օրինաչափություն է, որովհետև աշակերտների համար ուսուցումը գործունեության հիմնական տեսակն է , դրա համար էլ այն կարևոր դեր է կատարում նրանց անձի ձևավորման գործում: Ուսուցչի քաղաքացիական դիրքորոշումը, ձգտումը ՝ դաստիարակել բարձր արժեքներ կրող քաղաքացիներ, նրա մտահորիզոնը , հասարակական լայնախոհությունը, սերը երեխաների նկատմամբ

ուսումնական գործընթացի արժեքային դաստիարակչական ներգործության բարձրացման համար կարևոր պայմաններից են: Ընդ որում ՝ դաստիարակչական խնդիրների լուծումը պայմանավորված է նաև նրանով, որ ուսուցիչը համագործակցային փոխհարաբերությունների միջոցով նախատեսում է աշակերտների ոչ միայն մտավոր, այլև բարոյական, գեղագիտական ու ֆիզիկական դաստիարակության խնդիրների նկատմամբ համակողմանի մոտեցում:

Ուսուցման գործընթացում լուծվում են սովորողների կրթական, դաստիարակչական կամ արժեքային և ընդհանուր զարգացման խնդիրները: Դրա համար յուրաքանչյուր դասի դաստիարակչական խնդիրների լուծումը նախատեսում է ոչ թե մեկուսացված կամ առանձին մոտեցում, այլ գիտելիքների ու կարողությունների, արժեքային որակների ,կամքի, բնավորության, զգացմունքների, հոգեբանական տարբեր դրսևորումների միաժամանակյա և փոխկապակցված մոտեցում:

Արժեքների տարբերակումը

Արժեքները բավարարում են սուբյեկտի կենսական պահանջմունքները և իմաստավորում են կյանքը: Սուբյեկտի արժեքները միավորվելով կազմում են մի ամբողջական համակարգ: Անձի մասին կարելի է դատել նրան առավել բնորոշ արժեքներով, որոնք գոյացնում են անձի ներաշխարհը: Իսկ ինչ վերաբերում է ազգային արժեքներին, դրանք բախտորոշ նշանակություն ունեն և ձևավորվում են պատմական զարգացման ընթացքում, կազմում ներկա կեցության հիմքը և բնականոն գոյության ու անխափան զարգացման երաշխիքը: Ազգին հատուկ արժեքներն արտացոլվում են նրա ինքնագիտակցությանը տարբեր ձևերում՝ արվեստի, փիլիսոփայության, բարոյականության, կրոնական պատկերացումների բանահյուսության մեջ: Ազգի արժեհամակարգը պետք է յուրացնի յուրաքանչյուր անհատ հանրության մեջ բնականոն գործելու համար: Այսպիսով անհրաժեշտ է տարբերակել արժեք-միջոց և արժեք-նպատակ հասկացողությունները: Օրինակ <<իշխանությունը>>, մի բան է որպես միջոց, մեկ այլ բան որպես՝ նպատակ, նմանապես փողը և փառքը: Երբ իշխանությունը, փողն ու փառքը դառնում են անձի գերագույն արժեք, դա

հիվանդագին և ախտածին երևույթ է, մինչդեռ որպես միջոց դրանք համարվում են կյանքի ընդունելի ու անհրաժեշտ տարրեր:

Առանձնացնենք նաև արժեք-արժանիքները, որոնք անձի համար ոչ միայն կենսականորեն անհրաժեշտ բարիք են, այլ նաև ցանկալի հատկություն: Արժեք-արժանիքների ըմբռնումը կարևոր է <<անհատ-ազգ>> փոխհարաբերությունների կարգավորման առումով: Բոլոր անձնային հատկությունները հանդիսանում են տվյալ անձի արժանիքները, մասնավորապես <<հաստատակամություն>>, <<աշխատասիրություն>>, <<համբերատարություն>> և այլն: Պետք է տարբերակել ազգային արժանիքներ հասկացողությունը, որում առանձնանում է ազգային-պետական միաբանության ապահովումը: Միաբանության ապահովման մեջ վճռորոշ դեր են խաղում երեք հիմնական արժեք-արժանիքներ՝ արժանապատվություն, արդարամտություն, աշխատասիրություն:

Արժանապատվությունը սեփական <<Ես>>-ի արժեքի գիտակցումն է: Դա անձի վարքի, արարքների, իրավունքների գնահատականն է, անձի ինքնագնահատականը:Ազգային արժանապատվությունը սեփական ազգի արժանիքների, վաստակի, իրավունքների գիտակցումն է, ինքնահարգանքը՝ որպես ազգի ներկայացուցիչ:

Արդարամտությունը այլոց ճշմարիտ, արդարացի գնահատումն է: Եթե արժանապատվությունը անձի հարգանքն է իր հանդեպ, ապա արդարադատությունը հարգանքն է ուրիշների հանդեպ: Այսպիսով արդարամտությունը ոչ միայն անդրադառնում է մեր սեփական ինքնագնահատականի վրա, այլ նաև ազդում է դրա վրա:

Աշխատասիրությունը աշխատանքի հանդեպ անձի դրական վերաբերմունքն է: Այն բացառիկ կարևորություն ունի և առաջընթացի գլխավոր նախադրյալն է: Վերը նշված արժեք-արժանիքները խիստ փոխկապակցված են և դրանցից յուրաքանչյուրի բացակայությունը հանգեցնում է որևէ էական խնդրի առաջացման:

Այսպիսով պետք է հաշվի առնել, որ մշակույթն ու արժեքը չեն նույնանում, բայց և այնպես մշակույթում ստեղծված լավագույն հատկանիշը արժեքն է: Այն անհատներն ու ազգերը, ոոնք ապրում են արժեքների գերակայությամբ բարձր ոգեղեն հատկանիշներով ապրող ազգեր և անհատներ են, իսկ երբ

նվազում են արժեքները վրա է հասնում ոգու սովը:Ոգեղենությունը պետք է հատուկ լինի բոլորին, հատկապես՝ մտավորականությանը, որը համարվում է ազգի ինտելեկտուալ խիղճը:

Բարոյական արժեքներ

Արժեքը, աշխարհի յուրահատուկ ընկալումն է, որը ձևավորվում է ոչ միայն ձեռք բերված գիտելիքի և ինֆորմացիայի, այլև սեփական կենսափորձի հիման վրա:

Մշակույթը խիստ կապված է մարդու արժեհամակարգի հետ: Նեղ իմաստով՝ արժեքը մարդու համար իրի, առարկայի կամ երևույթի դրական նշանակությունն է: Արժեքը մարդու վերաբերմունքն արտահայտող ցուցանիշ է, որի կարևոր կատեգորիաներից են ՝ հավատն ու սերը:

Հավատը ծնում է հույս և մղում մարդուն ապրելու, ստեղծելու, արարելու: Հավատը դառնում է կողմնորոշիչ մարդու կյանքի և գործունեության համար: Մարդիկ քանի դեռ ապրում են՝ հավատում են, քանի դեռ հավատում են՝ ապրում են:

Սերը մյուս մարդկանց հետ միավորվելու ձգտումն է: Սիրո մեջ միավորվում են մարդու արժեքային պատկերացումները: Այն բաղկացած է մի քանի մակարդակներից: Այլասիրությունը ուրիշին սիրելու, իսկ եսասիրությունը սեփական անձը սիրելու երևույթն է:Նաև կան սիրո առանձնացված դրսևորումներ:Օրինակ սերը անհավասարների միջև, երբ միայն տալիս ես՝ առանց վերադարձի ակնկալիքի: Սիրո այդ ձևն անվանում են մայրական:Հաջորդը սերն է հավասարների միջև, երբ ինչքան տալիս, նույնքան ստանում ես: Օրինակ՝ եղբայրական սերը:

Սերն անհատական ընտրողական զգացում է, որը դրսևորվում է խորը և կայուն ապրումներում: Ըստ Հեգելի՝ սիրո ճշմարիտ էությունն այն է, որ հրաժարվես ինքդ քեզ գիտակցելուց, մոռանաս քեզ ուրիշի <<Ես>>-ի մեջ և այնուամենայնիվ , այդ կորսվածության ու մոռացվածության մեջ առաջին

անգամ գտնես և տիրապետես քեզ:Սերն ապրում է, որն ըստ Հեգելի չի հենվում խորհրդածությունների և դատողականության վրա, այլ բխում է զգացմունքից: Սերը խիստ անհատական և անկրկնելի ապրում է:

Ամեն մեկը յուրովի է սիրում: Սիրո մեջ մարդն ավելի պահանջկոտ է դառնում ինքն իր նկատմամբ, ձգտում ինքնակատարելագործման:Ահա թե ինչու սերը մշակութային և գեղեցիկ երևույթ է:

Հաճախ արժեք է համարվում ճշմարտությունը, հատկապես բարու և գեղեցիկի հետ կապվելիս: Բարու, գեղեցիկի, արդարի միասնության սկզբունքը գալիս է Սոկրատեսից,ով փիլիսոփայական գիտելիքը բաժանում է տեսականի(որի կրողը նա համարում է ճշմարիտը),գործնականի (բարին),գեղարվեստականի (գեղեցիկը):

Ճշմարտությունը միայն որոշակի սոցիալ-մշակութային պայմաններում է ձեռք բերում արժեքային նշանակություն, իսկ գոյաբանական և իմացաբանական իմաստներով ըմբռնված ճշմարտությունը արժեքաբանորեն չեզոք են: Կյանքում հաճախ ճշմարտությունը զոհաբերվում է արժեքներին: Եթե Արիստոտելն առաջնորդվում էր <<թեև Պլատոնը բարեկամս է, բայց ճշմարտությունը թանկ է>> սկզբունքով, ապա շատերն առաջնորդվում են << թեև ճշմարտությունը թանկ է, բայց Պլատոնը բարեկամս է>> սկզբունքով:

Գեղագիտական արժեքներ

Գեղագիտական արժեքների ուսումնասիրությունը գեղագիտության նոր և խոստումնալից միտումներից է: Հոդվածը քննում է գեղագիտական արժեքների բնույթը, անդրադառնում արվեստի գեղագիտական արժեքի խնդիրներին: Առաջարկվում է, որ իրական և երևակայելի իրականության բոլոր առարկաները և երևույթները կարող են ունենալ գեղագիտական արժեքներ: Այս վարկածի հաստատումը տրվում է ժամանակակից և դասական գրականության հիման վրա: Էսթետիկ արժեքները նախագծված են նպաստելու գոյության արժեբանական միասնության ձևավորմանը: Այս արժեքները ներկայացված են անհատների, ընդհանուր հասարակությունների կենսամակարդակով, ինչպես նաև անցյալի և ներկայի մշակութային երևույթներով:

Գեղագիտական արժեքների հակասական բնույթը դրսևորվել է այն պահից, երբ խնդիրը բացահայտվեց բավականին ընդգծված առումով: Նույնիսկ Սոկրատեսը վերլուծել է մի շարք հիմնարար սահմանումներ, ինչպիսիք են «լավ», «գեղեցկություն», արդարություն «ոչ թե վերացական, այլ արժեհամակարգային ուղղությամբ:

Պլատոնը մի փոքր այլ հարցեր է տալիս. Ինչ է գեղեցիկը և ինչը գեղեցիկ: Նրա աշխատանքում մենք կարող ենք տեսնել հասկացությունների էությունը և դրանց ձևակերպված արտահայտությունները տարանջատելու փորձ: Այս մոտեցումը փիլիսոփան օգտագործում է «գեղեցիկ» հասկացության առնչությամբ: Նա եզրակացնում է այս հայեցակարգը՝ փաստարկելով հետևյալը. այն չի կարող արտացոլվել միայն մի տեսակ գեղեցկությամբ: «Գեղեցիկը» չի կարող լինել այս կամ այն առարկայի կամ երեւույթի միայն մեկ հատկանիշը: Գեղեցկության սահմանման էական հատկանիշները պետք է լինեն օբյեկտիվ՝ անկախ որոշակի պայմաններից:

Պլատոնի սկզբունքը գեղագիտության բնագավառում ներքին և արտաքին, օբյեկտն ու առարկան, գիտելիքներն ու զգացմունքները, ամբողջն ու մասնավորը, նյութականն ու իդեալը միավորելն է: Փիլիսոփան ձգտում է բացատրել իդեալն ու նյութը՝ ցույց տալով իդեալը՝ որպես նյութի կառուցման հիմնարար հիմք, իսկ նյութը՝ որպես իդեալի արտացոլում: Այս մոտեցմամբ գեղեցկությունը հայտնվում է որպես մի տեսակ կապ, նյութի և իդեալի փոխադարձ ներկայացում: Պլատոնը կարծում է, որ իդեալը նյութի մեջ գտնում է ավելի ամբողջական մարմնացում, այնքան քիչ ՝ իրի մեջ: Նման բանը, կարծում է Պլատոնը, ավելի գեղեցիկ է: Այս բանի վերածումը առավելագույն դառնալու փիլիսոփայի կողմից դիտվում է որպես գաղափարի բացառիկ իրականացում: Այսպիսով, Պլատոնի համար երկինքը, տարածությունը, տիեզերքը, ամբողջությամբ վերցված, գործում են որպես գեղեցկության գաղափարի ամենաբարձր արտացոլումը:

Գեղեցկության գաղափարը երբեք առանձին չի դիտարկվել, այն միշտ կապված է եղել սիրո, արդարության, բարության գաղափարների հետ: Այս մոտեցումը թույլ է տալիս ապահովել արժեքային դաշտի ամբողջականությունը: Փիլիսոփայական մտքի պատմության մեջ առաջին անգամ բոլոր մյուս փիլիսոփայական կատեգորիաներից համապատասխան արժեքները առանձնացրել է հին մեծ մտածող

Արիստոտելը. «Աստվածային բարին ես անվանում եմ լավագույնը, օրինակ՝ հոգին, միտքը, ի սկզբանե եղել է առաջին սկզբունքը, և նմանը գնահատվում է: Ավելին, այն, ինչ գնահատվում է, այն է, ինչ հարգված է, և հենց այսպիսի բան է, որ մենք հարգում ենք »: Փիլիսոփայի գեղագիտության գեղեցկությունը գործում է որպես հիմնարար կատեգորիաներից մեկը, որը կարելի է վերագրել մի շարք առարկայական ոլորտների, ինչպես նաև արտացոլում է ինքնին գեղարվեստական գիտելիքի էությունը:

Արիստոտելը ապրանքների հարաբերական արժեքը կախված է վերջնական նպատակից: Ըստ նրա ՝ ավելի լավ է այն լավը, որն ավելի մոտ է նպատակին: Եթե համեմատենք երկու առավելություններ, ապա ավելի արժեքավոր կլինի դրանցից այն, որը որպես այդպիսին գործում է ոչ միայն կոնկրետ անձի համար, այլև ներկայացված է բացարձակ թվերով: Փիլիսոփան կարծում է, որ փիլիսոփայությունը «ամենաարժեքավորի հիմնական գիտությունն է», ուստի այն գիտական գիտելիքների միասնությունն է և «բնության մեջ ամենաթանկարժեք իրերի մտքի ընկալումը»:

Գեղագիտական արժեքները կոչված են նպաստելու էության աքսիոլոգիական միասնության ձևավորմանը: Այս արժեքները ներկայացված են ինչպես անհատների և հասարակությունների կյանքի մակարդակով, այնպես էլ մշակութային երևույթների մակարդակով:

Ուսուցման գործընթացում սովորողների արժեքային համակարգի ձևավորումը

Հայաստանի Հանրապետությունում կրթությունը զարգանում է ՅՈՒՆԵՍԿՕ-ի «Կրթություն բոլորի համար» ծրագրի համատեքստում: Ըստ միջազգային այս կառույցի՝ կրթության առաքելությունն ամփոփվում է հետևյալ առաջնահերթ նպատակներում.

- լայն տեսահորիզոնով ստեղծագործ անձի դաստիարակություն՝ մտավոր, գեղագիտական և ֆիզիկական դաստիարակության միջոցով.
- աշակերտների այնպիսի դաստիարակություն, որը նրանց կդարձնի ազատ և անկախ, ունակ՝ ինքնուրույն քննարկելու և

պատասխանատվությամբ կատարելու իրենց պարտականությունները.

- դաստիարակություն՝ հիմնված հումանիզմի համընդհանուր սկզբունքների վրա՝ պահապանելով սեփական մշակույթը և հարգելով այլոց մշակույթների յուրահատկությունները:

Հենց այս գաղափարների վրա է տեղի ունենում հասարակագիտության դասավանդման դերի արդիականացումը: Առհասարակ կարող ենք առանձնացնել կարևորագույն խնդիրներից ՝ դպրոցի դաստիարակչական ներուժի հզորացումը, սովորողների հանդեպ անհատականացված հոգեբանա-մանկավարժական մոտեցման ապահովումը:

Հոգևոր-բարոյական զարգացումը սոցիալականացման, արժեքային համակարգի ձևավորման գործընթացում անձի արժեքային-իմաստային ոլորտի հետևողականորեն ընթացող ընդլայնումն է և ամրակայումը, մարդու ընդունակության ձևավորումը՝ գնահատել և գիտակցորեն կանգնել ավանդական բարոյական նորմերի և բարոյական իդեալների հիմքի վրա ինքն իր, ուրիշ մարդկանց, հասարակության, պետության, հայրենիքի, ամբողջությամբ վերցրած՝ աշխարհի հանդեպ վերաբերմունքում և հարաբերություններում:

Կրթության մեջ հասարակագիտության մասնագետի կողմից սովորողների հոգևոր-բարոյական դաստիարակության և սոցիալականացման նպատակն է բանիմաց, ստեղծագործ, բարձր բարոյական ՀՀ քաղաքացու ձևավորմանը և զարգացմանը նպաստելը:

Նպատակը մասնատվում է խնդիրների, որոնք թույլ են տալիս կառուցել դաստիարակության ռազմավարությունը և ապահովել նրա արդյունավետությունը: Նպատակը մասնատվում է խնդիրների, որոնք թույլ են տալիս կառուցել դաստիարակության ռազմավարությունը և ապահովել նրա արդյունավետությունը: Դպրոցի սովորողների դաստիարակության և արժեքային համակարգի ընդհանուր խնդիրները դասակարգված են առանձին ուղղությունների, որոնցից յուրաքանչյուրը քանի որ սերտորեն կապված է մյուսների հետ, բացահայտում է ՀՀ քաղաքացու հոգևոր-բարոյական զարգացման մի էական կողմ.

- քաղաքացիա-հայրենասիրական դաստիարակություն,
- հոգևոր և բարոյական դաստիարակություն,
- ստեղծագործականության և աշխատանքի հանդեպ դրական վերաբերմունքի դաստիարակություն,
- մտավոր դաստիարակություն,
- առողջարարական դաստիարակություն,
- սոցիո-մշակութային և միջմշակութային դաստիարակություն,
- ընտանեկան արժեքների դաստիարակություն,
- հաղորդակցական մշակույթի ձևավորում,
- էկոլոգիական դաստիարակություն:

Այս խնդիրների բացահայտման և լուծման ուղղիների միջակայքում անգնահատելի մեծ է հասարակագիտության դերը:

Եզրակացություն

Կատարած աշխատանքի արդյունքում հանգել ենք հետևյալ եզրակացություններին՝

- Աշակերտը ստացած գիտելիքների շնորհիվ պետք է սիրի,հարգի,գնահատի մարդկանց, գնահատի բնության գեղեցկությունը, մշակույթը:

- Դպրոցն ավարտող աշակերտը որպես արժեքային համակարգի տարրեր պետք է պարտավորություն կրի հայրենիքի, բնության, հասարակության, սեփական անձի հանդեպ, ըմբռնի բնության հետ ներդաշնակ ապրելու անհրաժեշտություն: Պետք է դաստիարակել խորը հայրենասիրություն, ձևավորել հայրենիքի, ազգային պետության ու ժողովրդի նկատմամբ ազգային արժանապատվության ու հպարտության, անմնացորդ սիրո ու հարգանքի խոր զգացում: Ներարկել այն գաղափարը, որ հայրենիքին ու Հայոց բանակին ծառայելը պատվի գործ է:

Օգտագործված գրականության ցանկ

1. Հանրակրթական պետական կրթակարգ, Միջնակարգ կրթության պետական չափորոշիչ, Եր.
2. Բաբանսկի Յու. Կ., Պոբեդանոսցև Գ.Ա., «Աշակերտների դաստիարակությանը կոմպլեքսային մոտեցում», Երևան, 1987թ.
3. Մուդրիկ Ա. Վ., «Դպրոցականի անձը և դաստիարակությունը կոլլեկտիվում», Երևան, 1986թ.
4. Օլշաննիկովա Ա.Ե., «Հույզեր և դաստիարակություն», Երևան, 1985թ., էջ 84
5. Педагогика, под. ред. Ю. К. Бабанского, С. Нойнера и др. М., 1978,